



## ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն հրավիրում է մատակարար կազմակերպություններին ներկայացնելու գնային առաջարկ՝ ներառյալ հարկերը, խմելու ջրի ջրամատակարարման համար օգտագործվող Փ20-315մմ տրամագծերով ՊԷ խողովակների PE100 (PN16, SDR11), էլեկտրագոդվող, կոմպրեսիոն, հալեցվող, ռեդուկցիոն ձևավոր մասերի մատակարարման և տեղադրման, ջրահեռացման համար օգտագործվող Փ150-800մմ տրամագծերով ՊԷ ակոսավոր խողովակների և դետալների մատակարարման համար:

### Տեխնիկական և առևտրային պահանջներ՝

1. Ապրանքը պետք է ունենա որակի և համապատասխանության սերտիֆիկատներ:
2. Մատակարարումը պետք է իրականացվի առանձին պատվերների հիման վրա:
3. Ընտրված մասնակցի կամ մասնակիցների հետ կկնքվի միավոր գնի շրջանակային համաձայնագիր մեկ տարի տևողությամբ հետագայում շարունակելու հնարավորությամբ:
4. Սույն գնմանը մասնակցելու իրավունք չունեն անձինք.
  - 1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,
  - 2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:
  - 3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
  - 4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Որպես պայմանագրի ստորագրման նախապայման, պայմանագիր շնորհված ընկերությունը պետք է ներկայացնի հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանք հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ժամկետանց պարտքերի բացակայության վերաբերյալ:

Հետաքրքրվող հայտատուները կարող են գնային առաջարկի ներկայացման ձևի վերաբերյալ տեղեկություններ ստանալ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից աշխատանքային օրերին ժամը 09.00-13.00 և 14.00-18.00՝ ստորև նշված հասցեում՝

ՀՀ, ք. Երևան, 0014, Ադոնցի 6/1 հասցեում, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ, 9-րդ հարկ, Գնումների վարչություն:

Հեռ.՝ (374 11) 30-01-86, ( 441):

Էլ-փոստ՝ [procurement@vjur.am](mailto:procurement@vjur.am):

Գնային առաջարկները պետք է ներկայացվեն ստորագրված, կնքված և փակ ծրարով կամ էլեկտրոնային եղանակով վերը նշված էլ.փոստին, ոչ ուշ, քան 2018թ. հունվարի 16-ը, ժամը 15:00 վերը նշված հասցեով:

Ուշացած գնային առաջարկները կմերժվեն: